ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ մշակվել է՝ նպատակ հետապնդելով կատարելագործել աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական դաշտը:

Նախագիծն ամուր իրավական հիմք է ստեղծում աղետների ռիսկերի կառավարման և բնակչության պաշտպանության համար՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով աղետների ռիսկի նվազեցմանը: Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության համակարգի բոլոր կառույցներում իրականացվող այս գործընթացը կօգնի՝ կանխարգելելու կամ նվազեցնելու աղետների հետևանքները և համակարգը ռեակտիվից վերածել պրոակտիվ մոտեցմամբ գործող համակարգի:

Հարկ է հավելել, որ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» գործող օրենքն ընդունվել է 1998 թվականին, ինչը չի համապատասխանում ներկայիս միջազգային պահանջներին, մասնավորապես, Կայուն զարգացման նպատակներին և Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագրին: Միաժամանակ, 2018-2019թթ. պետական կառավարման համակարգում տեղի ունեցած կառուցվածքային և գործառութային փոփոխությունների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել՝ գործող օրենքը համապատասխանեցնելու ներկայիս կառավարման համակարգին:

Չափազանց հրատապ և կարևոր է պլանավորել և մշակել (կառավարել) աղետների ռիսկը, որպեսզի հնարավոր լինի ավելի արդյունավետ պաշտպանել մարդկանց կյանքն ու առողջությունը, նյութական, մշակութային արժեքները, էկոհամակարգերը, ինչպես նաև՝ հզորացնել պետության դիմակայունությունն աղետների հանդեպ: Վերջին իրադարձությունները, պայմանավորված կորոնավիրուսի (COVID-19) համաճարակով, ցույց տվեցին համայնքների և կազմակերպությունների պատրաստվածության բացակայությունը՝ նման խնդիրների դեմ պայքարելու հարցում: Այս իրավիճակը բնակչության պաշտպանության համակարգի բոլոր մակարդակներում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում արձագանքման կապակցությամբ պատրաստվածության և կազմակերպվածության մակարդակի յուրատեսակ ստուգատես էր: Աղետների ռիսկերի կառավարման պլանների բացակայությունը առավել խոցելի է դարձնում համայնքներին և կազմակերպություններին: Հետևաբար, աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների մշակման, ներդրման և կիրարկման պահանջը, բնակչության պաշտպանության բոլոր մակարդակների համար, պետք է սահմանվի օրենքով:

Միաժամանակ, հասարակական լայն շրջանակների մոտ, որոնք նաև մասն են կազմում բնակչության պաշտպանության համակարգի, ազգային անվտանգության մասին պատկերացումները շատ դեպքերում սահմանափակվում են հիմնականում ռազմական բաղադրիչով՝ արտաքին սահմանների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Նման ընկալումը հիմնականում պայմանավորված է երեք տասնամյակից ավելի ձգվող պատերազմական իրավիճակով: Մինչդեռ, ազգային անվտանգության համակարգը բազմաշերտ է, որի առաջնային խնդիրներից մեկը բնակչության բնականոն կենսագործունեության, ֆիզիկական և սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների անվտանգության ապահովումն է ինչպես արտաքին հակառակորդից, այնպես էլ՝ բնական աղետներից:

Բնական աղետներից երկրի բնակչության անվտանգության ապահովման համակարգն ունի բազմաթիվ, բազմաշերտ և խորքային խնդիրներ: Վերջին երեք տասնամյակում պետությունն իր վրա կրել է բնական աղետների հետևանքները: Ունեցել ենք հազարավոր մարդկային ու նյութական կորուստներ, ենթակառուցվածքների ավերածություններ:

Օրինակ՝ Սպիտակի երկրաշարժի աղետի գոտու մակերեսը կազմել է 10000 քառակուսի կիլոմետր՝ հանրապետության տարածքի 40 տոկոսը, ուր ապրում էր 1 միլիոն բնակիչ: Տուժել են 21 քաղաքներ և շրջկենտրոններ, 342 գյուղեր: Ավերվել է հանրապետության բնակֆոնդի 18 տոկոսը, 157 արդյունաբերական ձեռնարկություն, որտեղ աշխատում էր 82000 մարդ: Քանդվել է 21000 տուն, 84 դպրոց, 90 մանկապարտեզ, 2260 սննդի ու առևտրի օբյեկտ և այլն: Սպիտակի երկրաշարժի հետևանքով զոհվել է ավելի քան 25000 մարդ, Գյումրիում՝ մոտ 15000-17000, Սպիտակում՝ 4000 մարդ, Վանաձորում ՝ 1200, Ախուրյանում՝ 500 և Ստեփանավանում՝ 125 մարդ: Տնտեսական վնասը կազմել է ավելի քան 12 միլիարդ ԱՄՆ դոլար:

Մինչև Սպիտակի ավերիչ երկրաշարժը, Երևան քաղաքում կառուցված բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը կազմում էր մոտ 4765, որոնք հաշվարկված են 7-8 բալ ուժգնությամբ երկրաշարժի համար և կոնստրուկտիվ լուծումներով շատ դեպքերում չեն բավարարում սեյսմակայուն շինարարության նորմերի մի շարք պահանջներին: Այդ շենքերում բնակվում է Երևան քաղաքի բնակչության մոտ 70%-ը: Նախնական հաշվարկներով պարզվել է, որ կախված շենքի կառուցման տարեթվից, կոնստրուկտիվ առանձնահատկություններից և շահագործման ընթացքում ստացած վնասվածքներից, շենքերն ունեն սեյսմիկ խոցելիության հետևյալ աստիճանները.

- 5%-ն ունի չորրորդ աստիճանի վնասվածքներ, համարվում են վթարային և կարող են փլուզվել անգամ 6-7 բալ ինտենսիվության երկրաշարժի դեպքում,
- 45%-ն ունի բարձր խոցելիություն, այն է՝ կարող են փլուզվել 7-8 բալ (0.2g) ինտենսիվության երկրաշարժի դեպքում,
- 35%-ն ունի միջին խոցելիություն, այն է՝ կարող են փլուզվել 8-9 (0.3g) բալ ինտենսիվության երկրաշարժի դեպքում,
- 15%-ն ունի ցածր խոցելիություն, այն է՝ կարող են փլուզվել 9 (0.4g) բալից բարձր ինտենսիվության երկրաշարժի դեպքում:

2013 թվականին հայ և ճապոնացի մասնագետների կողմից դիտարկված հավանական երկրաշարժի սցենարներից մեկի համաձայն՝ Գառնու մերձակայքում ուժգին երկրաշարժի պարագայում Երևանում կզոհվի շուրջ 100000 մարդ: Նյութական վնասը կհասնի միլիարդավոր դոլարների, ինչը կդառնա պետական անվտանգության լրջագույն սպառնալիք:

Բնակչության պաշտպանության համակարգում ընդգրկված յուրաքանչյուր մարմին և կազմակերպություն պարտավոր է ամենօրյա քայլեր ձեռնարկել աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակներին արձագանքման պատրաստվածության բարձրացման և կարողությունների զարգացման ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով հետևանքները:

Ներկայումս արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի գրեթե բոլոր մակարդակներում առկա է աղետների ռիսկի գիտակցության անբավարար աստիճան՝ բնածին և տեխնածին բնույթի աղետների կանխատեսման ու վաղ ազդարարման, դրանց արագ արձագանքման համակարգերի զարգացման, աղետների ռիսկի կառավարման բնագավառում ներդրումների իրականացման, բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացման, աղետներին դիմակայունության մշակույթի ձևավորման, ենթակառուցվածքների ու տարածքային համաչափ զարգացման, աղետների ռիսկի նվազեցման ոլորտի իրավական դաշտում անհրաժեշտ ու հրատապ բարեփոխումների իրականացման և աղետակայուն երկրի կառուցման ուղղությամբ:

Աղետների ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է անդրադառնալ գոյություն ունեցող մարտահրավերներին, նախապատրաստվել հաղթահարելու ապագա մարտահրավերները, իրականացնել աղետների ռիսկերի մշտադիտարկում, գնահատում և այլ անհրաժեշտ գործառույթների իրականացում:

Աղետների ռիսկերի նվազեցումը և բնակչության պաշտպանությունը ենթադրում է պետական կառավարման համակարգի մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ներգրավումն աղետների ռիսկի կառավարմանը:

Հարկ է նշել, որ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» գործող օրենքով մանրակրկիտ ձևով կարգավորված չեն այն միջոցառումների շրջանակը, հիմնական ուղղությունները, որոնք ուղղված են աղետների ռիսկի նվազեցմանը, արձագանքմանն ու վաղ վերականգնմանը, ինչպես նաև՝ հետաղետային վերականգմանը:

Մինչ այժմ գործող օրենքով և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերով աղետների ռիսկի կառավարման գործընթացում պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակն ավելի սահմանափակ է և ոչ լիարժեք, մինչդեռ պետական կառավարման համակարգի մարմինները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում պետք է համակարգված և օպերատիվ կերպով իրականացնեն աղետների ռիսկի նվազեցման, արձագանքման և այլ միջոցառումներ:

Բացի այդ, գործող օրենքով կանոնակարգված չեն արտակարգ իրավիճակի կառավարման մակարդակները, որոնք ենթադրում են հանրապետական, մարզային, համայնքային և տեղային բնույթի:

Նախագծով նախատեսվում է նոր մոտեցում աղետների ռիսկի կառավարմանը, որով տրվում են հստակ իրավակարգավորումներ արտակարգ իրավիճակի մակարդակի մասին որոշման, դրանից բխող միջոցառումների և դրանց կատարման համար պատասխանատու մարմինների շրջանակի վերաբերյալ:

Այսպիսով, Նախագծի ընդունումը կնպաստի այն օրենսդրական բացերի լրացմանը, որոնք ներկայումս առկա են աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտում:

Միաժամանակ, առկա է նաև վարչական պատասխանատվության համապատասխան գործիքակազմ նախատեսելու անհրաժեշտություն՝ առաջարկվող կարգավորումների լիարժեք կենսագործումն ապահովելու համար:

2. <u>Առաջարկվող կարգավորման բնույթը</u>.

Նախագծով բնակչության պաշտպանության կազմակերպման և իրականացման գործընթացում հստակեցվում և ընդլայնվում են պետական կառավարման համակարգի մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակները, ապահովվում է աղետների ռիսկի կառավարման ապակենտրոնացման գործընթացը: Միաժամանակ, Նախագծով կարգավորվում են արտակարգ իրավիճակներում աղետների ռիսկերի նվազեցման, արագ արձագանքման և վաղ վերականգնման, հետաղետային վերականգնման գործընթացներից բխող միջոցառումների պատշաճ ապահովման գործընթացը:

Սահմանվում են նաև արտակարգ իրավիճակի մակարդակի մասին որոշման հիմքերը, այդ որոշման ընդունման հնարավորությունը, որի բովանդակության մեջ ներառվում են որոշման ընդունման համար հիմք հանդիսացած հանգամանքները, անհրաժեշտության հիմնավորումը, այն տարածքի սահմանները, որի տարածքում որոշվում է արտակարգ իրավիճակի մակարդակը, արտակարգ իրավիճակից բխող միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական մարմիններն ու պաշտոնատար անձանց շրջանակը:

Առաջարկվող Նախագիծը պարունակում է սկզբունքորեն նոր մտեցումներ, այդ իսկ պատճառով այն հանդիսանում է նոր մշակված օրենքի նախագիծ, ոչ թե՝ գործող օրենքի լրամշակված տարբերակ:

«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքի նախագծի առանձնահատկություններից են՝

1) **Ընդլայնվել են հասկացությունները՝** աղետների ռիսկի կառավարման և պլանավորման մասով, ինչպես նաև՝ այն հասկացությունները, որոնք բացակայել են գործող օրենքում, բայց կիրառելի են միջազգային հարթակում:

2) **Լրացվել են աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության սկզբունքները և նպատակները՝ դրանք համապատասխանեցնելով** ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ.

գործողությունների ծրագրին և այլ միջազգային պահանջների (հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներ և գենդերային հավասարություն և այլն):

3) **Աղետների ռիսկի կառավարման միջոցառումները բաժանվել են ըստ ենթաբաղադրիչների՝**

ա) աղետների ռիսկի նվազեցման.

բ) արտակարգ իրավիճակներին արձագանքման և վաղ վերականգնման.

գ) հետաղետային վերականգնման:

Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության համակարգի սուբյեկտների լիազորությունները և գործառույթները բաշխվել են՝ համաձայն աղետների ռիսկի կառավարման ենթաբաղադրիչների:

4) **Նախագծում ավելացվել և հստակեցվել են Կառավարության և լիազոր մարմնի լիազորությունները՝** պայմանավորված աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտում ենթաօրենսդրական դաշտի ապահովման համար պատշաճ լիազորող նորմեր նախատեսելու անհրաժեշտությամբ:

5) **Նախագծում ավելացվել են պետական մարմինների** (օրենսդիր, դատական իշխանություն և անկախ պետական մարմիններ) **լիազորությունները**, որոնք գործող օրենքից դուրս էին մնացել:

6) **Լրացվել է աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության համակարգը և կառավարումը բաժինը:** Մասնավորապես, սահմանվել են Արտակարգ իրավիճակների հանրապետական, մարզային, համայնքային և տեղային/օբյեկտային հանձնաժողովների, ինչպես նաև՝ աղետի ժամանակ գործող՝ աղետի հետևանքների վերացման կառավարման և ազգային աջակցման միջգերատեսչական աշխատանքային խմբերի ստեղծման (համաձայն միջազգային արձագանքման նորմերի) վերաբերյալ կարգավորումներ, որոնց կառուցվածքն ու գործողությունների ընթացակարգերը Նախագծի ընդունումից հետո կսահմանվեն ՀՀ կառավարության կողմից:

7) Սահմանվել են արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ դրանց առաջացման դեպքում արտակարգ իրավիճակներին արձագանքման կառավարման մարմինների և արձագանքման ուժերի աշխատանքային ռեժիմները՝

ա) ամենօրյա գործունեության,

բ) բարձր պատրաստականության,

գ) արտակարգ:

8) **Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության միջոցառումները (ներկայացված է հավելվածի տեսքով) հստակ բաշխվել են** պետական կառավարման համակարգի մարմինների միջև, ինչը գործող օրենքում բացակայել է և վերոնշյալ միջոցառումների պլանավորման և իրականացման տեսանկյունից առաջացրել խնդիրներ՝ դերակատարների բացակայության պատճառով:

9) **Նախագծով կանոնակարգվել են արտակարգ իրավիճակի դասակարգումն ըստ՝**

ա) հետևանքների ծավալների (հանրապետական, մարզային, համայնքային և տեղային/օբյեկտային մակարդակներ),

բ) արձագանքման կառավարման (հանրապետական, մարզային, համայնքային և տեղային/օբյեկտային մակարդակներ):

Նախագծով տրվել են հստակ իրավակարգավորումներ՝ արտակարգ իրավիճակի մակարդակ սահմանելու, դրանից բխող միջոցառումների և դրանց կատարման համար պատասխանատու մարմինների շրջանակի վերաբերյալ:

10) Նախագծով կանոնակարգվել է աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանավորման գործընթացը՝ բոլոր մակարդակների համար, ինչը բացակայել է գործող օրենքում:

11) ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ունենում է նախաբան, որում նշվում է իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր: Հետևաբար, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերի նախագծեր չեն ստացել հետագա ընթացք և մի շարք ուղղությունների գործընթացը խաթարվել է, մասնավորապես, աղետների ռիսկի կառավարման կամ արտակարգ իրավիճակներում գործելու պլանների մշակման, ներդրման ու կիրարկման, աղետների ռիսկի կառավարման ոլորտում հայեցակարգերի և ռազմավարությունների ընդունման ուղղություններով: Ներկայումս աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտի մի շարք ենթաօրենսդրական իրավական ակտեր չունեն համապատասխան լիազորող օրենսդրական նորմեր: Հաշվի առնելով վերոնշյալ օրենսդրական պահանջները և առկա օրենսդրական բացերը՝ Նախագծով սահմանվել են լիազորող նորմեր՝ աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման և ընդունման ուղղությամբ:

12) Թվայնացման արդի զարգացումներին համահունչ և գործընթացներն առավել դյուրին կառավարելի դարձնելու նպատակով Նախագծով նախատեսվում են նաև աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգ վարելու հետ կապված կարգավորումներ:

13) Նախագծով նախատեսվում է նաև արտակարգ իրավիճակի հետևանքով կյանքի (մահվան), ինչպես նաև անձի գույքին և առողջությանը պատճառված վնասներից պարտադիր ապահովագրություն, որի չափորոշիչները, պայմանները և կարգը սահմանելու լիազորությունը վերապահվում է Կառավարությանը:

Նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

Միասնական օրենսդրական կարգավորումներ ապահովելու նպատակով մշակվել է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագիծը, որով, մասնավորապես, առաջարկվում է աղետների ռիսկի կառավարման և բնակչության

պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու համար սահմանել համապատասխան պատասխանատվություն հետևյալ ուղղություններով՝

1) պաշտպանական կառույցների պահպանության, սպասարկման, շահագործման, հիմնանորոգման, վերանորոգման, նախապատրաստման, պատրաստականության բերման պարտականությունը չկատարելու.

բ. աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանները չմշակելու, չհամաձայնեցնելու, չհաստատելու և կիրարկումը չապահովելու.

գ. ազդարարման համակարգեր չստեղծելու, դրանց անխափան աշխատանքը և աշխատողների ազդարարումը չապահովելու.

դ. աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ուղղությամբ իրենց աշխատողների ուսուցման, իրազեկման և ուսումնավարժությունների կազմակերպման գործընթացը չապահովելու.

ե. արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման մասին լիազորված մարմնին չտեղեկացնելու.

զ. անվտանգության անձնագրի (արտադրական վտանգավոր օբյեկտներ), անվտանգության վկայագրի (վտանգավոր արդյունաբերական օբյեկտ), անվտանգության հայտարարագրի (հիդրոտեխնիկական կառուցվածքների) մշակման, հաստատման և լիազոր մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը ներկայացնելու պարտականությունը չկատարելու.

է. լիազոր մարմնի կողմից աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության վիճակի պլանավորված համալիր գնահատման և ոչ պլանավորված ուսումնասիրության գործընթացին տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ֆիզիկական անձանց կողմից խոչընդոտելու:

3. <u>Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.</u>

Հաշվի առնելով, որ Նախագծի ընդունման դեպքում այն միջնաժամկետ կտրվածքով առավելապես իրականացվելու է Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարության և 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում, ուստի վերջինիս ծախսային գնահատականը կարող է անհրաժեշտ տեղեկատվություն ապահովել Նախագծի ընդունման դեպքում սպասվող ծախսերի փոփոխությունների համատեքստում:

Անհրաժեշտ է նշել, որ հաշվի առնելով աղետների ռիսկի կառավարման ծախսատարությունը և հորիզոնական բնույթը, 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով առաջնահերթ նախատեսվում է իրականացնել Ռազմավարությամբ որպես գերակայություն սահմանված միջոցառումները, և գործողությունների ծրագրում ներառված միջոցառումների մեծ մասի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները

նախատեսվում է ապահովել համապատասխան տարվա համար ՀՀ պետական բյուջեով շահագրգիռ գերատեսչություններին առանձնացված հատկացումների ընդհանուր ծավալի շրջանակներում:

Բացի այդ, Ռազմավարության իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրում սահմանված մի շարք միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների մոտավոր գնահատականը կազմում է շուրջ **394,6 մլն. դրամ, որից 19,2 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (միջնաժամկետ ծախսային ծրագիր), իսկ մնացածը՝ զարգացման գործընկերների ֆինանսական աջակցության շրջանակներում**: Ներկայումս միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսական միջոցների տրամադրման հետ կապված ռիսկեր առկա չեն, այնուամենայնիվ, դրանց առաջացման դեպքում քայլեր կձեռնարկվեն այլ դոնոր կազմակերպություններից դրամական միջոցների ձեռքբերման ուղղությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազդեցության ու ծախսարդյունավետության տեսանկյունից աղետի կանխարգելումը և կանխումը 7-10 անգամ ավելի արդյունավետ են, քան դրա հետևանքների վերացումը, առաջարկվում է ռեսուրսները կենտրոնացնել աղետների ռիսկի կանխարգելման գործողությունների վրա՝ միաժամանակ ընդլայնելով ֆինանսավորման աղբյուրները, այդ թվում՝ մասնավոր հատվածի և զարգացման գործընկերների ներգրավմամբ:

Միաժամանակ, **Հանրային ներդրումային ծրագրի** շրջանակներում մշակվել է **«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հրշեջ-փրկարարական գույքի բարելավման ծրագիր**»-ը, որով նախատեսված են միջոցառումներ 2 տարվա կտրվածքով: Մասնավորապես, 2025թ. համար նախատեսված է **1 միլիարդ 182 միլիոն 500 հազար** դրամի հատկացում, որը նախատեսված է հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների, փրկարարական առաջին օգնության ավտոմեքենաների և ավտոսանդուղքների ձեռքբերման համար: 2026թ. համար նախատեսված են նույն ծավալի հատկացումներ՝ նույն գույքային կազմի ձեռքբերման համար: Պետք է նշել, որ **2025թ. համար նախատեսված հատկացումները արդեն փոխանցվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը**:

4. <u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.</u>

Նախագիծը մշակվել է Ներքին գործերի նախարարության կողմից:

5. <u>Ակնկալվող արդյունքը.</u>

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կատարելագործել աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտի իրավական դաշտը, ինչպես նաև՝ սահմանել նոր հասկացություններ, որոնք առկա չեն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» գործող օրենքում:

Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ուղղությամբ պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմիններին

վերապահվում են առավել ընդգրկուն իրավասություններ, որոնք օպերատիվ գործելու տեսանկյունից առավել արդյունավետ են:

Միաժամանակ, ամրագրվում է պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների լիակատար ներգրավվածությունը բոլոր մակարդակներում, ինչպես նաև՝ հստակեցվում է պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց իրավասությունների շրջանակը:

Ակնկալվող փոփոխություններով կազմակերպությունները, ըստ իրենց գործունեության առանձնահատկությունների, ևս մասնակից են դառնում արտակարգ իրավիճակներում աղետների ռիսկերի նվազեցման, արձագանքման և վաղ վերականգնման, հետաղետային վերականգնման գործընթացներին:

Նախագծով նախատեսվում են արտակարգ իրավիճակի մակարդակի մասին որոշման ընդունման հիմքերը, պայմաններն ու կարգը, արտակարգ իրավիճակի մակարդակի մասին որոշման բովանդակությունը, արտակարգ իրավիճակներում իրականացվող միջոցառումները:

Նախագծով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում առավել խոցելի խմբերին:

Ակնկալվող փոփոխություններով սահմանվում են ֆիզիկական անձանց, կազմակերպությունների իրավունքները և պարտականությունները, որոնք պետք է ուղղված լինեն արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծով նախատեսվում են վարչական պատասխանատվության միջոցներ՝ առաջարկվող կարագավորումներով նախատեսված պահանջները խախատելու համար:

6. <u>Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ</u>.

Նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի **«Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարությունը և 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»** N 1717-Լ որոշումից (միջոցառում 1.1.1՝ **«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Ազգային ժողով»**):